

վասնզի փոքր ինչ իրաց պատճառս հնարէր զի սպանցէ, եւ այլ անիրաւութիւնք բարձան յՆնատուոյ, եւ աւրհնէին զնա ամենայն երկիր, զի չկարէին ուղիղ հայել յերեսս ռայից<sup>1)</sup>: Թէպէտ եւ աստ այլ զրուսք ոչ կայր ի բաց՝ բաց իւրայնոցն, եւ այլոցն բանք ըսպառեցան բաց ի մէջ սալթանաթի եղողացն, զորս ինքն հաւանեալ կացուցեալ էր առ իւր եւ բնաւին բարձաւ թագաւորին երես երթողք եւ արզ տվողք, որպէս եւ գլխովին պատմէ գիրքս ըստ ժամանակին եւ ըստ տեղոյն: Բայց կրկին զերեւելիսն համառօտեսցուք աստ, թէպէտեւ անասելի թվի ինձ եւ քեզ անիմանալի արարք եւ գործիք սորա յամենայն իշխանութիւնս Տաճկաց եւ ի քրիստոնէութեան իշխանութիւնս: Սուտ է որ ասեն թէ Սուլթան Մուրատն զսորա կոտորածին տասնէն մէկ բաժինն է կոտորեալ, այլ զսորայ ճ իմասցիս ապա եւ զՄուրատինն՝ մի. ոչ թէ զնուաստագոյնսն եւ զգորականս միայն խաղայր ի սուր նորա, այլ եւ բազում փաշայս, պարոնս եւ պէկլէրպէկիս՝ սիրելիք եւ նախարարք երկց թագաւորացն, նաև փեսայք նոցա զորոց զմալս և զխազինաս զորս ինքն առնէր եւ զորս արքայի ցուցանէր, որով եւ զիւզս եւ շէնս, խանս եւ մզկիթս շինեաց ի ճանապարհս Թոխաթոյ եւ ի ճանապարհս յԻկոնիոնո<sup>2)</sup> եւ ի ճանապարհս Հալպայ առ Շամ: Շինէ եւ խանս ոչ շատ պակաս տեսլեամբ քան զմեծ Վալիսին՝ եռապատիկ յարկօք, պնդախարխիս պրճովք եւ հաստահիմն քարակիր խարսխօք. շինէ եւ հանդէպ նմա մէտրէսէ եւ գերեզմանատուն լաւ քան զամենայն վուզուրայից որ եղեն ի քաղաքս. եւ զայլն զկնի որդին առաւելացոյց, զոր պատմեն գիրքս:

1) յռայից.

2) յիկոնիոնիոս.